ԵՐԲ ՎՐԻՊՈՒՄ Է ԳՐԱԽՈՍԸ

Բոլորովին պատահաբար իմացա, որ դոկտոր (պատմական գիտությունների) Վրեժ Վարդանյանը գրախոսության անվան տակ շարունակում է գրավոր լուտանքներ տեղալ իմ հասցեին: Առաջին փորձը նա կատարել է «Էջմիածին» ամսագրի էջերում՝ 2009 թ. ԺԱ համարում տպագրելով «Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը ծուռ հայելու մեջ» (լույս է տեսել 2010 թ. մայիսին) վերտառությամբ պատմագիտական բազմաթիվ խեղումներով շարադրանքը «Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և մեր պատմության ընթացքը» գրքիս վերաբերյալ: Այժմ ճիշտ և ճիշտ նույն գրախոսության կլոնավորած տարբերակը, ակներևաբար առաջինի մնացորդները ի մի բերված ու չխմբագրված, որի պատճառով էլ իբրև մնացած, անկապակից խոսք տեղ է գտել «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի N 1-2. 2010-ում: Ասեմ, որ «Էջմիածին»-ում տպագրվածի իմ պատասխանը մեր ուշադիր ընթերցողը կարող է կարդալ «Կրոն և հասարակություն» հանդեսի այս տարվա N 12-ում: Իսկ թե ինչու ոչ «Էջմիածին»-ում՝ պատճառաբանված է նույն տեղում:

Այս անգամ ես մտադիր չեմ նորից վեր հանել իմ քննադատի դերը ստանձնածի կասկածելի գիտելիքներն ու խառնիխուռն տեղեկությունները հայոց պատմությունից, ցույց տալ, որ նա, չնայած իր գիտական աստիճանին, շփոթում է գրախոսությունն ու կիրքը (տես «գրախոսության» թեկուզ առաջին դարձվածները): Իսկ որպեսզի խոսքս մերկապարանոց չինչի, մի փոքրիկ հատված բերեմ Վարդանյանի գրչի արգասիքից և պատվելի հեղինակին հուշեմ, որ կարդացածը չհասկանալն ամոթ չէ, ամոթ է չհասկացածը փնովելը: Հատվածը սա է. «Հեղինակը (այսինքն՝ ես - Հ. Դ.) բնագրով չի տիրապետում սկզբնաղբյուրներին և գերի մնալով իր կանխակալ մտահայեցությանը՝ հանգում է անհեթեթության: Մի՞թե պարզ չէ, որ 428 թ. հայոց թագավորությունը վերացվեց Սասանյան արքայի կամքով, իսկ եկեղեցու գլուխը՝ Սահակ կաթողիկոսը, կտրուկ դեմ կանգնեց դրան՝ ծառանալով պարսից թագավորական ատյանի վճռի դեմ« (ԼՀԳ, էջ 503):

Ընդամենը երկու դարձված և երկու խոշոր վրիպում: Ի՞նչ արած, այսպիսին է ընդդիմախոսս: Հիմա, ի պաշտպանություն ինձ, ինքս ոչինչ չասեմ, այլ մեջբերեմ մի շատ ավելի լուրջ մարդու կարծիք: Այդ մարդը ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանն է, որը գրել է. «Նա (այսինքն՝ ես - Հ.Դ.) անչափ ուշադիր է սկզբնաղբյուրների տողի ու տառի հանդեպ և մեզ ստիպում է նորից թերթել սկզբնաղբյուրներն առանց նախապաշարումների, մի պահ մոռանալով անգամ հարցի պատմությունը: Սա, կարելի է ասել, յուրահատուկ էկզիստենցիալ մոտեցում է: Հեղինակն այդ վիճակում է և մեզ էլ ներքաշում է այդտեղ: Ուզում ենք դատել ոչ թե մեր, այլ իր իսկ առաջադրած խնդիրների տեսակետից և չվիճել (դա թերևս հնացած եղանակ է), այլ ինչ-որ բան գուցե լրացնել հարցի մեզ հետաքրքրող կողմից» (Հ. Հովհաննիսյան, Սրբախոսությո՞ւն, թե՞ պատմություն, «Ազգ» օրաթերթ, 08. 11. 2008): Սա՝ մեկ: Երկրորդը. ասում եք՝ Սահակ կաթողիկոսը կտրուկ դեմ կանգնեց ու ծառացավ պարսից թագավորական ատյանի վճռի դե՞մ (պարոն Վարդանյան, այսուհետև անմիջականության համար ուղղակի Ձեզ կդիմեմ): Բնագրով սկզբնաղբյուրները լա՞վ եք կարդացել, որտե՞ղ է նման բան գրված: Ինձ, օրինակ, ծանոթ են միայն Խորե-

նացին ու Փարպեցին (երրորդին եթե գիտեք՝ ցույց տվեք): Իսկ Խորենացին գրում է, որ դատարանում Պարսից Վռամ թագավորի առջև կաթողիկոսը լռեց, Հայոց արքա Արտաշեսի պաշտպանության համար «հրաժարվեց առհասարակ որևէ բան ասելուց, չար կամ բարի» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 433): Ասել է թե՝ Սահակն իրեն Պիղատոսի պես պահեց այդ ատյանում: Նա ձեռքերը լվաց, բառ անգամ չարտասանեց Հայոց թագավորի օգտին (ուր մնաց ծառանար որոշման դեմ), թեև քաջ գիտեր, որ իր խոսքը կարող է հակակշռել մեղադրող իշխանների վարկաբեկումներին, և խոսեց, երբ պետք եղավ պաշտպանել իրեն, «պարկեշտ և նազելի դիրք բռնելով, ինչպես բեմբասացության ժամանակ, համեստ հայացքով և ավելի համեստ ձայնով, և սկսեց ճառել իր հպատակության երախտիքները» (անդ, էջ 437): Այս մասին գրում է նաև Փարպեցին (տե՛ս Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, աշխ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 55):

Համաձայն չե՞ք, պարոն Վարդանյան, որ մեզ մնում է միայն չխեղաթյուրել Խորենացուն ու Փարպեցուն: Եվ ուրեմն, եթե ես իմ գրքում գրում եմ, որ Վռամ թագավորը Սահակ կաթողիկոսի «անչափ խոսուն լուռ համաձայնությամբ թագազրկեց Հայոց աշխարհը», ապա ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, որովհետև իսկապես սկզբնաղբյուրների վրա եմ հենվում, ոմանց պես երևակայությանս ձիերը բաց չեմ թողնում: Տեսեք, հարգելիս, ձեր հինգ տողի դիմաց ես գրեթե տասնապատիկ ավելին գրեցի (այն էլ՝ համառոտելով մտքերս) և ձեր յուրաքանչյուր տողի դիմաց նույնքան կարող եմ գրել, բայց դադարեցնում եմ: Պարզապես տեսնում եմ, որ մեր այս «երկխոսությունը» ոչ թե բանակռվի, այլ ձեր կողմից հրահրվող մերձգիտական լեզվակռվի կարող է վերածվել: Այնինչ, ներեցեք, դա իմ տարերքը չէ:

Պարզեմ նաև, որ մենք պատմագիտության մեջ տարբեր սկզբունքնե- րի, տարբեր դավանանքների հետևորդ ենք. ձերը պատմական ավանդազրույցն ու հեքիաթասացությունն է, իմը՝ պատմական ճշմարտությունը: Տեղյակ եղեք, գալիս է մի նոր սերունդ, որն այլևս չի հանդուրժում լալախառն կեղծիքը. նա ուզում է իմանալ՝ երբ, որտեղ և ինչ վրիպում է թույլ տրվել անցյալում, որպեսզի կարողանա մեր ներկան կարգավորել, ապագան ապահովել և ուրիշ Հայաստան կերտել: Նոր սերնդի համար գերագույն արժեք են սեփական հողն ու պետությունը, ձեզ համար՝ եկեղեցին ու հավատքը: Արդ՝ թե կարող եք, գտեք կապն այս երկու արժեքային համակարգերի միջև (գիրքս կօգնի՝ նորից կարդացեք), թե չեք կարող՝ մնացեք եկեղեցուն կից պատմաբան, զբաղվեք ձեզ հանձնարարված թեմաներով և մի խանգարեք: Նաև մարդկանց չարախոսելու պատրաստ մի ընդունեք. դա երբեք ծածուկ չի մնում:

ԴԱՎԹՅԱՆ Հ. Կ.